Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 20-ի N 821 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (այսուհետ՝ ԳՀՓԿԱ) կատարման գործընթացը, ինչպես նաև կարգավորվում են այդ գործընթացին առնչվող սուբյեկտների հարաբերությունները:

2. ԳՀՓԿԱ ձևավորման համար հիմք են հանդիսանում՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպառազինության և ռազմական տեխնիկայի (այսուհետ՝ ՍՌՏ) զարգացման պետական ծրագիրը.

2) պետական պատվիրատուների՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ), Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ), Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) և պետական կառավարման համակարգի մյուս մարմինների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկությունները (ՏԱ) և (կամ) մարտավարատեխնիկական (տակտիկատեխնիկական) առաջադրանքները (ՄՏԱ(ՏՏԱ).

3) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հայտատու) կողմից ներկայացված ԳՀՓԿԱ հայտերը:

3.Պետական պատվիրատուները Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) են ներկայացնում ռազմական արդյունաբերության արտադրանքի ազգային ստանդարտների համաձայն կազմված ԳՀՓԿԱ, ՏԱ և (կամ) ՄՏԱ(ՏՏԱ)-ները:

4. Կոմիտեն, ներկայացված ՏԱ, ՄՏԱ(ՏՏԱ)-ները 5 օրվա ընթացքում ուսումնասիրում և կից գրությամբ ուղարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 8-ի N 920-Ն որոշմամբ (այսուհետ՝ ռեեստր) սահմանված կարգով գրանցված մասնագիտացված սուբյեկտներին, որոնք այդ փաստաթղթերն ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեին տեղեկացնում են հայտեր ներկայացնելու և դրանց ներկայացման ժամանակահատվածի մասին:

5. ՏԱ, ՄՏԱ(ՏՏԱ)-ների հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ ԳՀՓԿԱ հայտերը ներկայացվում են կոմիտեին սույն կարգի N 1 ձևին համապատասխան:

6. Այն դեպքում, երբ հայտատուն հայտի հետ ներկայացրել է նաև ՏԱ, ՄՏԱ(ՏՏԱ)-ների հիման վրա ստեղծվելիք արտադրանքի տեխնիկական կամ այլ լավարկման առաջարկություն, կոմիտեն 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկում է ՏԱ, ՄՏԱ(ՏՏԱ) ներկայացրած պետական կառավարման համակարգի մարմնի համաձայնեցմանը:

7. Պետական կառավարման համակարգի մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում կամ մերժում է առաջարկությունը՝ դրա մասին գրավոր տեղեկացնելով կոմիտեին:

8. Կոմիտեն, պետական կառավարման համակարգի մարմնի դիրքորոշումն ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է հայտատուին:

9. Սույն կարգով սահմանված ԳՀՓԿԱ իրականացնելու համար հայտատուն հայտի հետ կոմիտեին ներկայացնում է նաև արդյունքի տեխնոլոգիական պատրաստիության ընթացիկ և վերջնարդյունքում ակնկալվող մակարդակը նկարագրող տեղեկանք՝ սույն կարգի N 2 ձևին համապատասխան, կամ հիմնավորում՝ նախագծի տեխնոլոգիական պատրաստիության մակարդակի (այսուհետ՝ ՏՊՄ) սանդղակներով դասակարգելու անհնարինության մասին:

10. Հայտատուն ԳՀՓԿԱ հայտին կից կոմիտեին ներկայացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետական միասնական գրանցամատյանից քաղվածք.

2) առկայության դեպքում՝ տեղեկություններ իր հետ փոխկապակցված իրավաբանական, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձանց վերաբերյալ՝ ներկայացնելով իրավաբանական, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքներ.

3) առկայության դեպքում՝ տեղեկություններ իր հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ՝ ներկայացնելով փոխկապակցվածությունը հավաստող փաստաթղթեր.

4) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվություն հարկային պարտավորությունների վերաբերյալ:

11. Կոմիտեն 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է հայտերը և թերի լինելու կամ առաջարկություններ ունենալու դեպքում հետ է ուղարկում հայտատուին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար, կամ

1) հայտերն ուղարկում է ԱԱԾ՝ հայտատուի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու և ԳՀՓԿԱ արդյունքի մասով հնարավոր պետական պատվիրատու հանդիսանալու վերաբերյալ կարծիք ստանալու համար.

2) հայտերն ուղարկում է հավանական պետական պատվիրատու հանդիսացող պետական կառավարման համակարգի մարմիններին՝ ԳՀՓԿԱ արդյունքի մասով հնարավոր պետական պատվիրատու հանդիսանալու վերաբերյալ կարծիք ստանալու համար:

12. Պետական կառավարման համակարգի մարմիններն իրենց դիրքորոշումն ուղարկում են կոմիտեին 15 աշխատանքային օրվա ընթացքում կամ գրավոր տեղեկացնում են լրացուցիչ ժամանակի անհրաժեշտության մասին:

13. Պետական պատվիրատուներից առնվազն մեկի և ԱԱԾ դրական դիրքորոշ-ման պարագայում ԳՀՓԿԱ հայտերը ներկայացվում են ՌԱՀ-ին կից Ռազմատեխ-նիկական գիտատեխնիկական խորհուրդ (այսուհետ՝ ՌՏԳՏԽ):

14. Եթե նախկինում նույնաբովանդակ աշխատանք ֆինանսավորվել կամ մերժվել է հաստատման կամ ձևավորման որևէ փուլում, կոմիտեն դրա մասին տեղեկանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ՌՏԳՏԽ-ին՝ եզրակացության մեջ դրան անդրադառնալու և ՌԱՀ-ի անդամների կողմից նիստում հետագա քննարկման համար:

15. Հայտերն ստանալուց հետո ՌՏԳՏԽ-ն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով հրավիրում է նիստ:

16. ՌՏԳՏԽ-ն, օրենքով սահմանված կարգով որոշումներն ստորագրելուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ուղարկվում է նաև կոմիտեին:

17. Պետական պատվիրատուների կողմից ներկայացված ՏԱ ՄՏԱ(ՏՏԱ) հիման վրա հայտատուի կողմից ներկայացված և դրական կարծիք ստացած ԳՀՓԿԱ հայտերը նույն թեմայի վերաբերյալ մեկից ավելի հայտատուների կողմից հայտեր ներկայացված լինելու դեպքում, ՌՏԳՏԽ-ն ներկայացված հայտերն ուղարկում է ՌԱՀ-ի քարտուղարություն՝ ՌԱՀ-ի անդամներին և պետական պատվիրատուներին փոխանցելու և կատարողին կամ կատարողներին ընտրելու նպատակով:

18. Կոմիտեն տեղեկացնում է հայտատուին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 1355-Ն որոշման համաձայն նախնական գնահաշվարկ ներկայացնելու մասին:

19. ՌԱՀ-ի նիստը հրավիրվում է օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

20. ՌԱՀ-ում հավանության արժանացած ԳՀՓԿԱ հայտերի վերաբերյալ արձանագրությունը ՌԱՀ-ի քարտուղարությունը 3 օրվա ընթացքում ուղարկում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (այսուհետ՝ ԲՏԱՆ):

21. ԲՏԱՆ-ը 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է «ԳՀՓԿԱ պետական պատվերը հաստատելու մասին» որոշման նախագիծ և սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

22. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համապատասխան որոշման ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնման հայտն ուղարկում է ԲՏԱՆ-ին՝ գնման գործընթացը կազմակերպելու և որոշման մեջ ընդգրկված թեմաների մասով հայտատուների (այսուհետ՝ կատարող) հետ պետության կարիքների համար գիտահետազոտական (ԳՀ) և (կամ) փորձա-կոնստրուկտորական (ՓԿ) աշխատանքների իրականացման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում գնման պայմանագիր կնքելու համար:

23. ԳՀՓԿԱ աշխատանքների կատարման պայմանները և փուլերի պահանջ-ները սահմանվում են համաձայն ռազմական արդյունաբերության արտադրանքի ազգային ստանդարտների, իսկ մնացած աշխատանքների ձևակերպումները հստակեցվում են տեխնիկական առաջադրանքներում:

24. Փուլը հանձնելուն պատրաստ լինելու վերաբերյալ կատարողը պետական պատվիրատուին ներկայացնում է ծանուցագիր համաձայն ռազմական արդյունա-բերության արտադրանքի ազգային ստանդարտների սահմանված ձևի: Պետական պատվիրատուի կողմից փուլի ընդունման աշխատանքներն արդյունավետ կազմա-կերպելու նպատակով ծանուցագիրը կարող է ներկայացվել նաև նախօրոք՝ նշելով աշխատանքին պատրաստ լինելու վերջնաժամկետը:

25. ԳՀՓԿ աշխատանքների դեպքում՝ «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, 15 աշխա-տանքային օրվա ընթացքում ձևավորվում է հանձնաժողով, որն իրականացնում է աշխատանքների, դրանց փորձարկումների և (կամ) փուլի ընդունում՝ համաձայն կիրառելի ազգային ռազմական ստանդարտների:

26. Փուլի ընդունման աշխատանքներն ամփոփվում են ակտով: Հանձնաժողովի որոշմամբ փուլի ընդունման ժամանակ ի հայտ եկած թերությունները և բացթողում-ները շտկելու նպատակով կազմակերպությանը տրվում են առաջարկություններ և ողջամիտ ժամանակ, որոնք սահմանվում են արձանագրության մեջ:

27. Ակտը 7 աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում է հանձնաժողովը ձևավորած պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարների կողմից և ուղարկվում կոմիտեին:

28. Կոմիտեն 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված ակտն ուղարկում է կատարողին՝ ընդունված փուլի մասով փաստացի գնահաշվարկ ներկայացնելու համար:

29. Կատարողը հաստատված ակտն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի համաձայնեցմանն է ներկայացնում փաստացի գնա-հաշվարկ:

30. Գնահաշվարկի համաձայնեցումից հետո կազմակերպությունը 3 աշխա-տանքային օրվա ընթացքում կոմիտեին է ներկայացնում ընդունված փուլի մասով վճարման և այլ անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

31. ԳՀՓԿԱ աշխատանքների ավարտից հետո իրականացվում է ԳՀՓԿԱ պայմանագրերի արդյունքում ստացված գույքի ընդունում-հանձնում, որից հետո մեկամսյա ժամկետում գույքն օրենքով սահմանված կարգով հանձնվում է շահագրգիռ պետական կառավարման համակարգի մարմնին:

32. ԳՀՓԿԱ պայմանագրի ավարտից կամ լուծումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է աշխատանքային խումբ, որը 20 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ակտով ընդունում է մշակված փաստաթղթերի (կոնստրուկտորական փաստաթղթեր, գնահաշվարկ և այլն) ամբողջական փաթեթը, ուսումնասիրում ավարտված կամ լուծված պայմանագրի կատարման ընթացքում ձեռք բերված գույքը (սարք-սարքա-վորումներ, հաստոցներ, լաբորատոր և չափիչ սարքեր և այլն) և ներկայացնում առաջարկություն ԲՏԱՆ-ին՝ գույքի հետագա տնօրինման կամ Պետական գույքի կառավարման կոմիտեին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ փոխանցելու վերաբերյալ:

Ձև N 1

ՀԱՏՈՒԿ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ՓՈՐՁԱԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԻ

Հայտը հանձնված է

_____ _____ 202_ թ.

1. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Նախագծի անվանումը	
Նախագծի հեղինակը	
Նախագծում ընդգրկված հիմնական Հայտատուների քանակը	
Կատարման ժամկետը *(ամիսներով)*	
Նախագծի իրականացման հիմնական փուլերը և դրանց կատարման ժամկետները *(ամիսներով)*	
Պահանջվող ֆինանսավորման ծավալը *(նախագծի ընդհանուր արժեքը հազ.դրամ)*	
Հայտատուի տեսակը *(իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)*	

Նախագծի ղեկավարի տվյալները

Ազգանուն, անուն, հայրանուն	
Հանրային ծառայության համարանիշը	
Ծննդյան ամսաթիվը և ծննդավայրը	

Կրթությունը (բարձրագույն ուսումնական հաստատությունը, մասնագիտությունը)	
Պաշտոնը	
Նախկինում ղեկավարած/մասնակցած նախագծերի/ծրագրերի անվանումները և իրականացման ժամկետները	
Հեռախոսահամարը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	

Հայտատուի ընդհանուր տվյալները *(իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)*

Անվանումը
Իրավաբանական /գրանցման հասցեն
Գործունեության հասցեն
Հարկ վճարողի հաշվառման համարը/ հանրային ծառայությունների համարանիշը *(ֆիզ.անձի դեպքում)*
Պետական ռեգիստրի գրանցման համարը/անձնագիրը *(ֆիզ.անձի դեպքում)*
Հեռախոսահամարը
Էլեկտրոնային փոստի հասցեն
Կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը, հայրանունը

Նախագծի ֆինանսական գծով պատասխանատուի տվյալները

Ազգանուն, անուն, հայրանուն	
Հանրային ծառայությունների համարանիշը	

Պաշտոնը	
Հեռախոսահամարը	
Էլեկտրոնային փոստի հասցեն	

2. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Նախագծի համառոտ բնութագիրը

2.2. Նախագծի բովանդակությունը*

2.3. Ակնկալվող արդյունքների բնութագիրը

2.3.1. Տեխնիկական ցուցանիշները

2.3.2. Կիրառության բնագավառները

2.3.3. Համեմատությունը նմանօրինակների հետ

* Հիմնավորել նախագծի նպատակը, ներկայացնել նախագծի հիմնական խնդիրը, գիտատեխնիկական կարևորությունն ու արդիականությունը, նկարագրել նախագծի իրականացման ուղիները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, հայտատուների՝ տվյալ ուղղությամբ ձեռքբերումները և ավարտական ձևերը:

3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ, ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ) ՄԱՍԻՆ**

NN ը/կ	**Հաստիքի (պաշտոնի, գործառույթի) անվանում**	**Քանակ**	**Նախագծի շրջանակներում հայտատուի կողմից իրականացվող աշխատանքների բնույթ**	**1 հաստիքային միավորի համար ամսական աշխատավարձ**

**Անհրաժեշտ է ներկայացնել նախագծի բոլոր մասնակիցների (հայտատուների) ինքնակենսագրականները (CV)

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ***

NN ը/կ	**Հոդվածների անվանումները**	**Կազմակերպության ծախսերը (հազ. դրամ)**
1.	Ուղղակի արտադրական ծախսումները	
2.	Անուղղակի արտադրական ծախսումները	

3.	Ինքնարժեքը	
4.	Ոչ արտադրական ծախսերը	
5.	Ընդամենը	
6.	Շահույթը	
7.	Գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի	
8.	Ավելացված արժեքի հարկը	
9.	Գինը	

*** Լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 1355-Ն որոշման համաձայն՝ ծախսերը ներկայացնելով ըստ առանձին հոդվածների (բացվածքով)

4.1 Տեղեկություններ նախորդ 3 տարիներին հայտատուի կողմից վճարված հարկերի վերաբերյալ.

Կազմակերպության ղեկավար _____

անունը, ազգանունը, ստորագրությունը

Նախագծի ղեկավար _____

անունը, ազգանունը, ստորագրությունը

Ֆինանսական գծով պատասխանատու _____

(հաշվապահ) անունը, ազգանունը, ստորագրությունը

Ձև N 2

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ (ՏՊՄ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Եթե նախագիծը հնարավոր է դիտարկել ՏՊՄ տրամաբանության մեջ (լրացնել աղյուսակը)

Մակարդակ	**Նշել ավարտվել է/ իրականացվելու է**	**Որքա՞ն գումար է ծախսվել (ծախսվելու) այս մակարդակին հասնելու համար**	**Որքա՞ն են տևել (տևելու) այս մակարդակի մշակումները**	**Ի՞նչ միջոցներով են տեղի ունեցել (ունենալու) մշակումները. (եթե նախկին ԳՀՓԿ է, ապա նշել ԳՀՓԿ պայմանագրի համարը)**	**Մեկնաբա-նություն**
ՏՊՄ 1					
ՏՊՄ 2					
ՏՊՄ 3					
ՏՊՄ 4					
ՏՊՄ 5					
ՏՊՄ 6					
ՏՊՄ 7					
ՏՊՄ 8					

2. Եթե նախագիծն իմաստալից չի դիտարկել ՏՊՄ-ներով, տալ դրա մանրամասն հիմնավորումը.

Ձև 2-ի օրինակ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ (ՏՊՄ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ

3. Եթե նախագիծը հնարավոր է դիտարկել ՏՊՄ տրամաբանության մեջ (լրացնել աղյուսակը)

Մակար-դակ	**Նշել ավարտվել է/ իրականացվելու է**	**Որքա՞ն գումար է ծախսվել (ծախսվելու) այս մակարդակին հասնելու համար**	**Որքա՞ն են տևել (տևելու) այս մակարդա-կի մշակում-ները**	**Ի՞նչ միջոցներով են տեղի ունեցել (ունենալու) մշակումները. (եթե նախկին ԳՀՓԿ է, ապա նշել ԳՀՓԿ պայմանագրի համարը)**	**Մեկնաբա-նություն**
ՏՊՄ 1	Ավարտվել է	1 մլն ՀՀ դրամ	6 ամիս	Սեփական միջոցներ	
ՏՊՄ 2	Ավարտվել է	2 մլն ՀՀ դրամ	8 ամիս	ԳՀՓԿԱ պետ ֆինանսավորում պայմ. ԱԱ-00	
ՏՊՄ 3	Ավարտվել է	3 մլն ՀՀ դրամ	10 ամիս	ԳՀՓԿԱ պետ ֆինանսավորում պայմ. ԱԱ-00	
ՏՊՄ 4	Իրականացվելու է	1 մլն ՀՀ դրամ	2 ամիս	Նոր ՓԿ հայտ	Ֆինանսա-վորման բաշխումը մակար-դակների
ՏՊՄ 5	Իրականացվելու է	1.5 մլն ՀՀ դրամ	2 ամիս	Նոր ՓԿ հայտ	
ՏՊՄ 6	Իրականացվելու է	1 մլն ՀՀ դրամ	2 ամիս	Նոր ՓԿ հայտ	
ՏՊՄ 7	Իրականացվելու է	2 մլն ՀՀ դրամ	2 ամիս	Նոր ՓԿ հայտ	

					միջև մոտավոր է
ՏՊՄ 8					

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

1. ՏՊՄ 1 - Հիմնական սկզբունքների դիտարկում: Այս մակարդակում իրականացվում են գիտական սկզբունքների դիտարկում և ուսումնասիրություններ, որոնք կարող են դառնալ նոր գաղափարների և նոր տեխնոլոգիայի հիմք:

2. ՏՊՄ 2 - Տեխնոլոգիական գաղափարի, հայեցակարգի ձևավորում: Այս մակարդակում իրականացվում է գաղափարի նախնական ձևակերպում և գնահատում, մշակվում են գաղափարը տեխնոլոգիայի վերածելու կոնցեպտուալ լուծումներ, տեխնոլոգիայի կիրառական ուղղություններ:

3. ՏՊՄ 3 - Նմուշի մշակման գործընթաց և տեխնոլոգիայի նախնական ստուգում (փորձարարական նախանմուշ): Այս մակարդակում իրականացվում է գաղափարի փաստարկված մշակում, մոդելավորում, նախնական նախագծում, որոշ աշխատանքների դեպքում առաջին նախատիպային մոդելի ստեղծում, կատարվում է առաջնային ստուգում՝ պարզելու գաղափարի գիտական ճշգրտությունն ու հնարավորությունները և հասկանալու, թե որքանով է հնարավոր գաղափարը կիրառել տեխնոլոգիայի մակարդակում և հետագայում, ըստ անհրաժեշտության, իրականացնել ՓԿ աշխատանքներ:

4. ՏՊՄ 4 - Տեխնոլոգիայի ստուգում (նախնական փորձարկում) վերահսկելի (լաբորատոր) միջավայրում: Այս մակարդակում տեխնոլոգիան մշակվում և ստուգվում է նախապես պատրաստված լաբորատոր պայմաններում, կատարվում են նախնական փաստարկված փորձարկումներ՝ հաստատելու նմուշի համապատասխանությունը ՏԱ-ին:

5. ՏՊՄ 5 - Տեխնոլոգիայի ստուգում (փորձարկում) համապատասխան միջավայրում: Այս մակարդակում նմուշն ստուգվում է իրական միջավայրին մոտ

պայմաններում, որպեսզի գնահատվի դրա հնարավոր կիրառումը, գնահատվում է տեխնոլոգիայի աշխատանքն ավելի լայն պայմաններում՝ համոզվելու, որ այն կարող է աշխատել իրական միջավայրում:

6. ՏՊՄ 6 - Նախատիպի ցուցադրում իրական (նախատեսված) պայմաններում, որտեղ հանձնաժողովի ներկայությամբ ամբողջական նախատիպը ցուցադրվում է իրական պայմաններում կամ իրականին մոտ միջավայրում, որտեղ նախատեսվում է այն կիրառել՝ փաստարկելու ԳՀՓԿԱ-ի իրականացման արդյունքը:

7. ՏՊՄ 7 - Ամբողջական համակարգի ցուցադրում օպերացիոն (աշխատանքային) միջավայրում: Այս մակարդակում ամբողջական և ինտեգրված համակարգը ցուցադրվում է համապատասխան օպերացիոն պայմաններում, իրականացվում են ցուցադրական փորձարկումներ՝ հավաստելու, որ տեխնոլոգիան համապատասխանում է օպերացիոն միջավայրի պահանջներին, և կարող է կիրառվել լայնամասշտաբ նպատակներով:

8. ՏՊՄ 8 - Համակարգի ավարտական փորձարկում և հավաստագրում: Այս մակարդակում տեխնոլոգիան կամ համակարգն անցնում են պետական փորձարկումներ և ստանում են պաշտոնական հավաստում բարեհաջող փորձարկումների վերաբերյալ: Այս մակարդակում պատրաստ է կիրառման և մասշտաբային արտադրության գործունակ տեխնոլոգիա, որն անցել է ստանդարտներին համապատասխանության մանրամասն գնահատում, կազմվել է օգտագործման և տեխնիկական սպասարկման փաստաթղթերի փաթեթ:

Տեխնոլոգիաների մշակումը հնարավոր չէ դիտարկել ՏՊՄ սանդղակով հետևյալ դեպքերում.

1. Ոչ գծային զարգացման գործընթաց

Երբ տեխնոլոգիայի զարգացումը չի ընթանում փուլային տրամաբանությամբ, այլ զուգահեռ տարբեր ուղղություններով՝ առանց հստակ սահմանված հաջորդականության: Օրինակ, եթե արհեստական բանականության նոր մոդելը զարգացվում է տարբեր ալգորիթմներով, որոնք կարող են միաժամանակ լինել ՏՊՄ 2, ՏՊՄ 5 և ՏՊՄ 7 մակարդակներում:

2. Հետազոտական ուղղվածություն առանց կիրառելի զարգացման

Եթե տեխնոլոգիան գտնվում է մաքուր գիտական հետազոտության փուլում, առանց կոնկրետ կիրառական զարգացման պլանի: Օրինակ՝ քվանտային հաշվարկների կամ ֆունդամենտալ ֆիզիկայի ոլորտում որոշ նոր հայտնագործություններ կարող են չունենալ հստակ ընթացք ՏՊՄ սանդղակով:

3. Խիստ գաղտնի կամ պաշտպանված տեխնոլոգիաներ

Երբ անվտանգության նկատառումներով հետազոտության և զարգացման գործընթացները չեն հրապարակվում և չեն անցնում հանրահայտ փուլեր: Օրինակ՝ ռազմական հատուկ ծրագրերը, որոնց զարգացման մասին տեղեկատվությունը փակ է, և ՏՊՄ մակարդակները չեն կարող ստանդարտ կերպով գնահատվել:

4. Շատ արագ զարգացող կամ փոփոխվող տեխնոլոգիաներ

Երբ տեխնոլոգիան այնքան արագ է զարգանում, որ առանձին ՏՊՄ մակարդակները չեն հասցնում կիրառվել: Օրինակ՝ ծրագրային ապահովման որոշ լուծումներ կամ արհեստական բանականության մոդելները, որոնք մշակվում են արագ կրկնությունների (iterations) միջոցով:

5. Համակցված տեխնոլոգիաներ՝ տարբեր պատրաստիության մակարդակներով

Երբ մեկ համակարգում օգտագործվում են մի քանի տարբեր տեխնոլոգիաներ, որոնցից յուրաքանչյուրը գտնվում է տարբեր ՏՊՄ մակարդակներում: Օրինակ՝ նոր զինվորական դրոն, որի կառավարման համակարգը ՏՊՄ 7-ում է, բայց էներգիայի աղբյուրը՝ ՏՊՄ 4-ում:

6. Փորձարարական տեխնոլոգիաներ՝ առանց արդյունաբերական կիրառման հեռանկարի

Եթե տեխնոլոգիան ստեղծվում է միայն տեսական կամ լաբորատոր ուսումնասիրության համար, և դրա նպատակը չի ներառում վերջնական արտադրանքի ստեղծում: Օրինակ՝ նյութաբանության մեջ նոր տարրերի ուսումնասիրություն, որոնք դեռևս չեն ուսումնասիրվել արտադրական մասշտաբով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

23.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ